

- 138 Այսպէս նա զայն առեալ տանէր
 Ի Սամաթիա ուր տունն իւր էր,
 Անդ վաղ ընդ փոյթ ձիս պատրաստէր
 Առ ածել զայն ուր պատուէրն էր:
- 139 Ի պողոտայս Սարգսի դիպին
 Ծանօթ ոմանք որք զարհուրին,
 Յիմանալ չար դիպուած նորին
 Զոր եւ այլոց իսկ պատմէին:
- 140 Զայն ինչ լուեալ եւս Սիմոնի
 Էջմիածնայ նուիրակի
 Թէպէտ արտմեալ ցաւէր կարի
 Այլ գօնալ չիշխէր ի տես Սարգսի:
- 141 Որ եւ յետոյ զարեղայն իւր
 Յրդէր առ նա ոսկուվք հարիւր,
 Զի լուեալ էր թէ յայնմ առուր
 Ի դրամոց էր նա թափուր:
- 142 Նաեւ Գասպարն որ Մուրատեան
 Յրդեալ առ նա զոմն աննշան՝
 Ասէր հաճել ըզկամս չաւուշեան
 Առ մընալ անդ ցօրն վաղուեան:
- 143 Զի բարեկամք նսրին ողջոյն
 Գուն գործէին միահաղոյն,
 Ազատ առնել զնա ի պատժոյն
 Յաքսորանաց եւ երկաթոյն:
- 144 Յայնժամ Սարգիս ըզՁաւուշին
 Փորձեալ ծածուկ ըզգարկ բազկին՝
 Եգիտ ըզպարին ըստամոքսին
 Յագեալ ոսկուվք Պատրիարքին: